ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 27/19 «09» 01 2024 թ.

«Լոկատոր» ՓԲԸ
(ՀՎՀՀ 00095651)
ՀՀ ք. Երևան , Կոմիտասի 36ա-22
էլ. հասցե՝ tender@locator.am

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ և «Լոկատոր» ՓԲԸ-ի միջև 20 սեպտեմբերի 2023թ.-ին կնքվել է թիվ ՀՀ Ո ԵՄԾՁԲ-23-ՍՊԱՍԱՐԿՈՒՄ-2023 ծածկագրով օպերատիվ կառավարման կենտրոնի ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման և արդիականացման ծառայությունների ձեռք բերման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) 358,000,000 /երեք հարյուր հիսունութ միլիոն/ ՀՀ դրամի չափով, որից հետո «Լոկատոր» ՓԲԸ-ի հետ կնքվել է Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը 17.10.2023 թվականին, որով Պայմանագրի 4.1 կետով սահմանված 358 000 000 /երեք հարյուր հիսունութ միլիոն/ ՀՀ դրամ գումարից սահմանվել է 40 000 000 /քառասուն միլիոն/ ՀՀ դրամ, որից միայն 7,468,000 /յոթ միլիոն չորս հարյուր վաթսունութ հազար/ ՀՀ դրամ գումարի ծառայություններն են մատուցվել պատշաճ կերպով և ընդունվել պատասխանատու ստորաբաժանման կողմից: Ծառայությունների մնացած մասով «Լոկատոր» ՓԲԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել պայմանագրի տեխնիկական բնութագրի համաձայն, մասնավորապես՝ ծառայությունները մատուցվել են ոչ պատշաճ, թերի և ուշացումներով:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1

հավելվածով սահմանված պահանջներին կամ/և խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և «Լոկատոր» ՓԲԸ-ի միջև 20.09.2023թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԵՄԾՁԲ-23-ՍՊԱՍԱՐԿՈՒՄ-2023 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Տեղեկացնում ենք, որ Պայմանագրի չկատարած մասով երաշխիքով սահմանված գումարներ՝ 6 000 000 / վեց միլիոն / ՀՀ դրամ որակավորման ապահովման գումարից 4,879,800 / չորս միլիոն ութ հարյուր յոթանասունինը հազար ութ հարյուր երեսուն ամբողջ ութ / ՀՀ դրամ և 4 000 000 / չորս միլիոն / ՀՀ դրամ պայմանագրի ապահովման գումարից 3,253,200 /երեք միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր / ՀՀ դրամ գումարները գանձման նպատակով Պատվիրատուն պահանջ կներկայացնի երաշխիք տվող անձին:

Ինչպես նաև «Լոկատոր» ՓԲԸ-ին տրվում է 5 օրացուցային օր տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված (համաձայնագիր 1-ով հաստատված գումարը արդեն իսկ նվազեցրած) գումարներ՝ 31,800,000 /երեսունմեկ միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ պայմանագրի ապահովման գումարը և 95,400,000 / իննսունհինգ միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ որակավորման ապահովման գումարը ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N900005000758 հաշվեհամարին փոխանցելու համար, ինչպես նաև ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005028106 հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել Պայմանագրի 5.2 կետերով նախատեսված տուգանք՝ 1,790,000 /մեկ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամի չափով, հակառակ դեպքում բոլոր գումարները կգանձվեն դատական կարգով: Վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժին /ք. Երևան,Նալբանդյան 130/:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Լոկատոր» ՓԲ ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

«09» 01 2024թ.

ք.Երևան

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա Աբասյան
Հեռ. 010-59-68-57